

- ցուածս եւ ինքեանք բարձին զխաչն Քրիստոսի՝ յանձն առեալ զաղբատութիւն եւ զմիակեցութիւն. զցայգ եւ զցերեկ ծառայելով Աստուծոյ, նմանելով առաջին հարց եւ ճգնաւորաց. որոց համբաւ վարուցն եւ ճգնութեան ել ընդ ամենայն երկիր, մանաւանդ առ ազգս
- 115 Հայոց: Ընդ որս էր եւ այս Գրիգոր, զոր այժմ առաջնորդ է. այր մեծ, յաղթանդամ եւ հակայածեւ, սրբասնեալ եւ եօթնարփի շնորհօք լցեալ՝ զարդարեալ ներքին եւ արտաքին մարդով, այս է հոգեկանաւ եւ մարմնակա-
- 120 նաւ, նմանեալ Գրիգորի Լուսաւորչի անուամբ եւ գործովք. զորս ի բազմաց սակաւն ասացից եւ եզից առաջի սիրով լսողացդ զառնէս զայսմանէ եւ վասն նորոգման սուրբ Յերուսաղէմայ:

ՊԱՐՏԻ ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ

- Քանզի նախ քան զայս ի սուրբ Յերուսաղէմ վիճակն Հայոց գերեալ եւ աւիրեալ բազում ժամանակս. եւ ամենայն ուխտատեղք եւ եկեղեցիք անօրինականաց ամայի եղեալ, որ-
- 5 պէս վերոյ ասացաւ՝ ի գրաւի: Այլ եւ այս եղև ի յանհոգութենէ եւ թուլութեանց առաջնորդաց առաջնոց: Եւ թէ հարկ լինէր պատարագ անել, ոչ գոյր սրկի, խաչ, աւետարան. երթային, կաշառ տային, բերէին
- 10 շուրջառ եւ այլ ինչ եւ մատուցանէին պատարագ, եւ դարձեալ տանէին փութով: Եւ այն-

113 յորոց: — 119 հոգեկանաւ: — 122 յայսմանէ... Յերուսաղէմայ: